ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հրապարակման հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հեղինակ՝ Ալբերտ Հայրապետյան

Ներածություն

Այս ձեռնարկն ուսանողական ինքնակառավարման մարմինների ստեղծման և գործունեության կառուցակարգերի մշակման ուղեցույց է, որում ներկայացվում են վերջիններիս հիմնադրման, գործունեության իրականացման պայմանների ընձեռնման, ֆինանսավորման սկզբունքների և թափանցիկության ու ժողովրդավարական ներքին մեխանիզմների ապահովման հնարավորությունները:

Ուղեցույցի մշակման նպատակով ուսումնասիրվել է ոլորտի միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև խորքային հարցազրույցներ են իրականացվել ՀՀ մի շարք բուհերի ղեկավար կազմի ներկայացուցիչների և ուսանողների հետ: Տեսազանգի միջոցով առցանց խորքային հարցազրույց է իրականացվել Տնտեսագիտության և քաղաքականության Լոնդոնի համալսարանում (London School of Economics and Political Science) գործող Էթնիկ պատկանելության և ազգայնականության ուսումնասիրման ասոցիացիայի (The Association for the Study of Ethnicity and Nationalism (ASEN)) հիմնադիրներից մեկի հետ, ով նաև թեմայի գիտակ է և ասոցիացիայի հիմնադրումից առաջ ուսումնասիրել է աշխարհի մի շարք երկրներում առկա փորձը: Նշյալ ասոցիացիան, տակավին, ուսանողական ինքնակառավարման մարմնի վառ օրինակ է:

Ուսումնասիրված գրականությունից և խորքային հարցազրույցներից պարզ է դառնում, որ ուսանողական ինքնակառավարման մարմինները կարող են լինել ֆորմալ և ոչ ֆորմալ: Սակայն, ՀՀ բարձրագույն ոլորտի օրենսդրությունը կարգավորող օրենքների և վերջիններիս նախագծերի տրամաբանությունը հաշվի առնելով՝ ուղեցույցում, մասնավորապես և գլխավորապես ներկայացվում են ֆորմալ ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության սկզբունքները:

Ուղեցույցի բաժիններում առանձին-առանձին անդրադարձ է կատարվում ուսանողական ինքնակառավարման մարմինների ստեղծմանը, ուսանողական ինքնակառավարման մարմին-ուսումնական հաստատություն հարաբերությունների հիմքում ընկած անկյունաքարային սկզբունքների հաստատմանը, ֆինանսավորմանը, ներքին ժողովրդավարությանը, ինչպես նաև վերջիններիս գործունեության թափանցիկության և հաշվետվողականության համար անհրաժեշտ մեխանիզմների ներդրմանը: Հավելենք, որ բուհերի ուսանողական մարմինները ինքնակառավարվող են և ուղեցույցն ունի խորհրդատվական, այլ ոչ պարտադիր բնույթ:

1. «Ուսանողական ինքնակառավարման մարմին» հասկացությունը

Ուսանողական ինքնակառավարման մարմինը ուսումնական հաստատության շրջանակներում ուսանողների կողմից կամավորության հիմունքների վրա ստեղծված միավորում է, որի գործունեությունը բխում է հիմնադիրների կողմից նախանշված առաքելությունից և դրանից ածանցվող տեսլականից, նպատակներից և խնդիրներից:

Գործունեության արդյունավետության և համակարգվածության բարձրացման նպատակով կարևոր է, որ ուսանողական ինքնակառավարման մարմինը ունենա՝

1. նախաձեռնող խումբ,
2. հստակ ձևակերպված առաքելություն,
3. բուհի իրավասու մարմնի կողմից վավերացված գրանցում :

Կարևոր է, որ ուսանողական ինքնակառավարման մարմնի առաքելությունը չհակասի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների, ոչ խտրական վերաբերմունքի, բռնության բացասման և օրինականության սկզբունքներին: Այդ նպատակով, գրանցման հայտին կից նախաձեռնող խումբը պետք է ներկայացնի նաև ստորագրված հայտարարագիր (տե՛ս ստորև):

Ստորև սխեմատիկ կերպով ներկայացվում է ուսանողական ինքնակառավարման մարմնի գրանցման գործընթացը՝



Հարկ է նշել, որ ՀՀ բուհերում ավանդաբար գործել և ամուր դիրքեր են ունեցել ուսանողական խորհուրդները և ուսանողական գիտական ընկերությունները: Ըստ օրենքի, ուսանողական ինքնակառավարման մարմինները ներառում են վերջիններիս, սակայն միայն դրանցով չեն սահմանափակվում: Ուսանողական ինքնակառավարման մարմինների օրինակներ են մասնագիտական, մշակութային, արվեստի, մարզական ակումբները, կոնկրետ խնդիր կամ խնդիրների լուծման նպատակով միավորված ուսանողների խմբերը:

Խիստ ցանկալի է, որ ելնելով բազմամյա լավագույն միջազգային փորձից, ուսումնական հաստատության իրավասու մարմինը ստեղծի և գործածի ***էլեկտրոնային գրանցամատյան*** իսկ լավագույն դեպքում ներդնի ***էլեկտրոնային կառավարման համակարգ***, որտեղ արտացոլված կլինեն գրանցված բոլոր ուսանողական ինքնակառավարման մարմինները և նրանց գործունեությանն առնչվող տեղեկատվությունը:

2. Ուսանողական ինքնակառավարման մարմնի գործունեության սկզբունքները

Ուսանողական ինքնակառավարման մարմնի գործունեության հիմքում ընկած է կամավորության սկզբունքն ու գաղափարը: Բառակապակցությունն ինքնին հուշում է, որ գործունեությունը խարսխված է ինքնակառավարման սկզբունքի վրա: Ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեությունը պետք է խարսխված լինի ժողովրդավարության, բռնության ու խտրականության բացասման, հավասար մասնակցության հնարավորության, բազմակարծության, կոլեգիալության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների հիման վրա:

3. Նախաձեռնող խումբ

Ուսանողական ինքնակառավարման մարմնի ստեղծման հայտ ներկայացրած ուսանողների խումբը կոչվում է *նախաձեռնող խումբ*: Ուսանողական ակտիվության խթանման, ինչպես նաև բազմազանության ապահովման նպատակով ցանկալի է, որ հնարավորինս փոքր լինի նախաձեռնող խմբի կամ ուսանողական ինքնակառավարման մարմնի անդամների նվազագույն թիվը: Ըստ էության, ուսանողական ինքնակառավարման մարմին ստեղծելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ առնվազն երեք ուսանող:

4. Ուսանողական ինքնակառավարման մարմնի գրանցումը

Կարևոր է, որ ուսանողական ինքնակառավարման մարմնի գրանցման թերթիկը ներառի հետևյալ տեղեկությունները՝

1. նախաձեռնող անդամների անունները, ազգանունները, ֆակուլտետը և ուսանողական տոմսերի համարները (առկայության դեպքում),
2. ;մբի ստեղծման նպատակները,
3. հետագա գործունեության հակիրճ նկարագիրը,
4. անհրաժեշտության դեպքում ուսումնական հաստատության կողմից ակնկալվող միջոցները,
5. հայտարարագիր, որով նախաձեռնող խումբը հավաստիացնում է, որ ստեղծվելիք խումբը չի զբաղվելու ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով արգելված գործունեությամբ, զերծ է մնալու կուսակցական և կրոնական քարոզչությունից, քրեական ենթամշակույթի տարածումից ու ջատագովումից, մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների դեմ գործողություններից, խտրական վերաբերմունքից, բռնության կոչերից և այլ հակաօրինական քայլերից:

Կախված ուսումնական հաստատության առանձնահատկություններից և վերջիններիս իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումներից՝ հայտը կարող է պարունակել նաև այլ տեղեկություններ: Ուսանողական

ինքնակառավարման մարմնի գրանցման հայտի, ինչպես նաև հայտարարագրի օրինակելի ձևաչափերը ներկայացված են ստորև։

Գրանցման հայտ

Նախաձեռնող խմբի անդամների անունները, ազգանունները և առկայության դեպքում՝ ուսանողական տոմսի համարները

_____

Ուսանողական մարմնի անվանումը

_____

Ուսանողական մարմնի ստեղծման նպատակների համառոտ շարադրանք

_____

_____

_____

Հետագա գործողությունների ամփոփ նկարագրում

_____

_____

_____

_____

Եթե առկա է անհրաժեշտություն, ապա ուսումնական հաստատությունից ակնկալվող ռեսուրսներ (տարածք, համակարգիչ, կահույք և այլն)

_____

Նախաձեռնող խմբի անդամների կոնտակտային տվյալները (էլ. հասցե և հեռախոսահամար)

_____

Նախաձեռնող խմբի անդամների ստորագրություններ

X _____

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Սույնով մենք՝ ուսանողական ինքնակառավարման մարմին (հետայսու՝ մարմին) ստեղծելու հայտ ներկայացրած ներքոստորագրյալ նախաձեռնող խմբի անդամներս (անուններ, ազգանուններ, և առկայության դեպքում նաև ուսանողական քարտերի համարներ) հավաստում ենք, որ՝

- մեր գործունեության շրջանակներում առաջնորդվելու ենք ՀՀ Սահմանադրությամբ, ըստ որի Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, որտեղ մարդը բարձրագույն արժեք է, մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է,

- ստեղծվելիք մարմինը (անվանումը), որևիցե պարագայում չի զբաղվելու ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով արգելված գործունեությամբ,

- ստեղծվելիք մարմինը զերծ է մնալու կուսակցական և/կամ կրոնական քարոզչությունից, քրեական ենթամշակույթի տարածումից և ջատագովումից, բռնության կոչերից, ատելության խոսքից, խտրական վերաբերմունքից, ինչպես նաև այնպիսի գործունեության իրականացումից որը կարող է արտահայտվել անձի իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ։

Նախաձեռնող խմբի անդամների անունները, ազգանունները և առկայության դեպքում ուսանողական տոմսի համարները՝

_____

Նախաձեռնող խմբի անդամների ստորագրություններ՝

_____

x _____

5. Ուսանողական ինքնակառավարման մարմինների կանոնադրությունը

Ուսանողական ինքնակառավարման մարմինը կարող է ունենալ կանոնադրություն, եթե գտնում է, որ այն կնպաստի իր առաքելությունից բխող խնդիրների առավել արդյունավետ լուծմանը: Առկայության դեպքում կանոնադրությունը պետք է հիմնված լինի ժողովրդավարության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքի վրա: Կարևոր է, որ կանոնադրության մեջ հստակ ներկայացված լինի Ուսանողական ինքնակառավարման մարմնի առաքելությունը, նպատակները և խնդիրները, նոր անդամների ընդունելության կարգը, ինչպես նաև ինքնալուծարման մեխանիզմները: Ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեությանը լեգիտիմություն հաղորդելու, ինչպես նաև ֆոնդհայթայթման դյուրացման տեսանկյունից կարևոր է, որ վերջիններիս կանոնադրությունները հաստատվեն ուսումնական հաստատության ակադեմիական կոլեգիալ մարմնի կողմից:

6. Ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության սահմանափակումները

Չափազանց կարևոր է ուսանողական ինքնակառավարման մարմինների անկախությունը կրոնական (բացառությամբ հոգևոր ուսումնական հաստատությունների) կազմակերպություններից և քաղաքական կուսակցություններից, վերջիններիս ազդեցությունից, ինչպես նաև վերջիններիս հետ կապված կամ հանրային ընկալման մեջ վերջիններիս հետ կապված ընկալվող անհատներից և/կամ հիմնադրամներից: **Կարևոր է, նաև, որպեսզի ուսանողական մարմնի անվանումը չպարունակի այնպիսի բառեր, որոնք այն կասոցացնեն կոնկրետ քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների հետ:**

Հիշենք, որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 397-րդ հոդվածի, համակարգչային համակարգի միջոցով հանրությանը նյութեր տարածելու կամ որևէ այլ ձևով մատչելի դարձնելու միջոցով ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, հավանություն տալը կամ արդարացնելը, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով ՔՐԵԱԿԱՆԱՑՎԱԾ է ՀՀ օրենսդրությամբ:

7. Խմբերի ներկայացվածությունը բուհի կառավարման մարմիններում

ՀՀ բուհերում, որպես կանոն, ավանդաբար ներկայացված են եղել ուսանողական խորհրդի ներկայացուցիչները: Ավելին, մշակութային, մարզական, բարեգործական և տարատեսակ այլ միջոցառումները կազմակերպվել են ուսանողական խորհուրդների կողմից կամ վերջիններիս հովանու ներքո, իսկ գիտական միջոցառումները՝ ուսանողական խորհուրդների կամ ուսանողական գիտական ընկերությունների կողմից, կամ էլ վերջիններս գիտական միջոցառումները համատեղ են կազմակերպել: Եթե բուհում մի շարք ուսանողական խմբեր են գործում, ապա ակամայից հարց է առաջանում, թե ով պետք է ներկայացնի ուսանողներին ուսումնական հաստատության տարբեր օղակներում: Այս առումով, նախընտրելի է, որ

ուսանողների շահերը ներկայացնեն այն միավորումները, որոնց առաքելությունը հենց ուսանողների շահերը ներկայացնելն է, այլ ոչ թե պայմանական ֆիլատելիստների ուսանողական ակումբը: Սակայն, խորհրդարանական ընտրությունների ձևաչափով ընտրական գործընթացների իրականացումը, ըստ էության, կսահմանափակի ուսանողական որևէ մարմնում չընդգրկված, սակայն ուսումնական հաստատության տարբեր օղակներում ուսանողի ձայնը ներկայացնել ցանկացող ուսանողների (անկախ թեկնածուների)՝ ընտրություններում առաջադրվելու հնարավորությունը: Հնարավոր է նաև, որ օրինակ՝ մարզական կամ մշակութային ակումբները նույնպես իրենց կանոնադրության մեջ հռչակեն իրենց՝ ուսանողների ձայնն ու իրավունքները ներկայացնելու առաքելությունը կամ նպատակը՝ խորհրդարանական ձևաչափով վերջիններիս ընտրության մասնակցության հնարավորության ընձեռումը դարձնելով բանավեճի առարկա: Այդ իսկ պատճառով ցանկալի է, որ այդպիսի մանդատով օժտված լինի պայմանական ուսանողական խորհուրդը՝ խարսխված ներքին ժողովրդավարության և զսպման ու հակակշռման մեխանիզմների վրա: Վերջինիս կանոնադրության օրինակելի ձևը ներկայացված է հավելվածում:

8. Ֆինանսական աղբյուրները

Ուսանողական ինքնակառավարման մարմնների անկախության, ինքնավարության և գործունեության շարունակականության ապահովման նպատակով կարևոր է ստեղծել նախադրյալներ և հնարավորություններ, որպեսզի վերջիններս ֆինանսավորում ստանան ՀՀ օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից, սակայն վերջիններիս՝ քաղաքական կամ կրոնական գործունեություն ծավալող անհատներից կամ կազմակերպություններից ֆինանսավորում ստանալը անընդունելի է: Միևնույն ժամանակ, միջմշակութային հաղորդակցության ամրապնդման, ուսանողական մարմնի ֆինանսական ինքնաբավության և ուսումնական հաստատությունների միջազգային կապերի ամրապնդման տեսանկյունից ցանկալի է, որ ուսանողական

մարմիններն անդամակցեն ՀՀ օրենսդրությամբ չարգելված կամ կրոնական կամ քաղաքական գործունեություն չծավալող միջազգային կազմակերպություններին և համանման ուսանողական կառույցներին՝ այդ թվում նաև այդպիսի կազմակերպություններից և կառույցներից ֆինանսավորում ներգրավելու նպատակով:

9. Ուսումնական հաստատության կողմից ուսանողական ինքնակառավարման մարմիններին գույքի և տարածքի տրամադրումը

Ուսումնական հաստատություններն ունեն սահմանափակ տարածքներ, գույք և տեխնիկա և միանգամայն հավանական է, որ վերջիններս չկարողանան մշտական տարածք և գույք հատկացնել գրանցված բոլոր ուսանողական մարմիններին: Ուստի, ցանկալի և նպատակահարմար է ստեղծել տարածքների ամրագրման ճկուն և թափանցիկ էլեկտրոնային համակարգ, որի միջոցով ուսանողները կկարողանան որոշակի սահմանափակ ժամկետով օգտվել ուսումնական հաստատության տարածքի մի մասից և/կամ գույքից: Օրինակ՝ ենթադրենք X ուսանողական մարմնին 3 ժամով տարածք է անհրաժեշտ Y միջոցառման կազմակերպման նպատակով: Ենթադրվում է, որ մարմնի ներկայացուցիչը կամ ներկայացուցիչները նախապես մտնում է/են էլեկտրոնային համակարգ և այդ նպատակով տրամադրվող տարածքների և/կամ գույքի (օրինակ՝ համակարգիչ, տպիչ և այլն) հասանելիության մասին տեղեկատվությունը ստուգելուց հետո որոշակի ժամանակով ամրագրում է/են տվյալ տարածքից և/կամ գույքից օգտվելու իրավունքը: Ցանկալի է նաև, որ հակիրճ նշվի տարածքի և/կամ գույքի օգտագործման նպատակը:

Հնարավոր է նաև, որ ուսանողական խմբերին իրենց գործունեության շարունակականության ապահովման և արդյունավետության բարձրացման նպատակով կամ վերջիններիս բնույթով և առանձնահատկություններով պայմանավորված տարածքների և/կամ գույքի անժամկետ ամրակցման

անհրաժեշտություն առաջանա։ Այսպիսի իրավիճակում ցանկալի է գույքով և անհրաժեշտ այլ միջոցներով ապահովել այն մարմիններին, որոնք աջակցում են կրթության և ուսումնառության արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը՝ հաշվի առնելով բուհի պրոֆիլային ուղղվածությունը։ Այն պարագայում, երբ այդպիսի կազմակերպությունների միջև ընտրություն կատարելու անհրաժեշտություն է առաջանում, կարևոր է հաշվի առնել ուսանողական մարմինների անդամների թվաքանակը և գործունեության նկարագիրը։ Շատ կարևոր է, որ նախապատվություն տրվի նաև այլ ուսանողական մարմիններին, որոնք պատրաստակամ են տրամադրված տարածքը և/կամ գույքն ու տեխնիկան համատեղ օգտագործել ուսանողական այլ մարմինների հետ։ Այս պարագայում նախընտրելի է, որ ուսանողական մարմինները դիմեն համատեղ։ Կամայականության կամ այդպիսի ընկալման կասկածի բացառման նպատակով առաջարկվում է, որպեսզի ուսումնական հաստատությունները տարածք կամ գույք ու տեխնիկայի ամրակցման հայտերը գնահատելիս առաջնորդվեն բալային համակարգով (օրինակ՝ 0-20 բալային սանդղակով), որի օրինակը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1. Տարածքի և/կամ գույքի ամրակցման հայտ ներկայացրած ուսանողական մարմինների հայտերի գնահատման բալային համակարգ։

Ուսանողական մարմին	**Բալ**
Պրոֆիլային կրթության և ուսումնառության արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր իրականացնող	20
Գիտական և/կամ հետազոտական գործունեություն իրականացնող	20
Իրավապաշտպան գործունեություն, մարդու իրավունքների ջատագովություն կամ իրազեկվածության բարձրացում իրականացնող	19
Ոչ պրոֆիլային գիտական և/կամ հետազոտական գործունեություն իրականացնող	18
Ոչ պրոֆիլային կրթության և ուսումնառության արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր իրականացնող	17
Մշակութային (ներառյալ՝ արվեստի) և/կամ սպորտային միջոցառումներ իրականացնող	15
Ժամանցային և այլ միջոցառումներ իրականացնող	10

Մինչև 5 հոգանոց	1
6-15 ուսանողներ	3
16-30 ուսանողներ	5
31-50 ուսանողներ	10
51-100 ուսանողներ	12
100-150 ուսանողներ	15
150 և ավելի ուսանողներ	20

Եթե ուսանողական խմբերը դիմում են համատեղ, ապա անհրաժեշտ է գումարել վերջիններիս բալերը: Օրինակ՝ եթե 8 ուսանողից բաղկացած ժամանցային միջոցառումներ իրականացնող ուսանողական խումբը տարածք ամրակցելու հայտ է ներկայացրել 21 ուսանողից բաղկացած մարդու իրավունքների ջատագովություն և իրազեկվածության բարձրացում իրականացնող ուսանողական խմբերի հետ համատեղ, ապա ըստ վերը նշված աղյուսակում առկա գնահատման մոտեցման՝ հայտատու մարմինները միասին կունենան 35 բալ (3+10+5+17):

Տարածքի և անհրաժեշտ այլ գույքի դիմում-հայտերի օրինակելի ձևերը ներկայացված են ստորև:

Ուսանողական մարմնին տարածք ամրակցելու հայտ

Բուհում գրանցված ուսանողական մարմնի (համատեղ հայտի պարագայում՝ մարմինների) անվանումը և անդամների թվաքանակը

_____

Նյութական պատասխանատու ուսանողի/ուսանողների տվյալները (անուն, ազգանուն, ֆակուլտետ, կուրս)։

_____

Բուհում գրանցված ուսանողական մարմնի (համատեղ հայտի պարագայում՝ մարմնի) գործունեության նկարագրությունը։

_____

_____

_____

_____

Հայցվող տարածքի մեծությունը

_____

Հայցվող տարածքի օգտագործման նպատակները

_____

_____

_____

_____

_____

Ուսանողական մարմնի անդամների կոնտակտային տվյալները (էլ. հասցե և հեռախոսահամար)

_____

Ուսանողական մարմնի (համատեղ դիմումի դեպքում՝ մարմինների ղեկավարների) ղեկավարի ստորագրությունը

X _____

Ուսանողական մարմնին գույք կամ տեխնիկա ամրակցելու հայտ

Բուհում գրանցված ուսանողական մարմնի (համատեղ հայտի պարագայում՝ մարմինների) անվանումը և անդամների թվաքանակը

_____

Նյութական պատասխանատու ուսանողի/ուսանողների տվյալները (անուն, ազգանուն, ֆակուլտետ, կուրս)։

_____

Բուհում գրանցված ուսանողական խմբի (համատեղ հայտի պարագայում՝ մարմինների) գործունեության նկարագրությունը։

_____

_____

_____

_____

Հայցվող գույքի/տեխնիկայի քանակը և նկարագրությունը

_____

Հայցվող գույքի/տեխնիկայի օգտագործման նպատակները

_____

_____

_____

_____

_____

Ուսանողական մարմնի անդամների կոնտակտային տվյալները (էլ. հասցե և հեռախոսահամար)

_____

Ուսանողական մարմնի (համատեղ դիմումի դեպքում՝ մարմինների ղեկավարների) ղեկավարի ստորագրությունը

X _____

10. Ուսումնական հաստատության կողմից ուսանողական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորման մեխանիզմները

Ուսումնական հաստատությունների կողմից ուսանողական ինքնակառավարման մարմիններին առանձնացված գույքի, տարածքի կամ ֆինանսական միջոցների հատկացումը կարող է խարսխված լինել երկու սկզբունքների վրա։ Առաջին սկզբունքը անդամակցության հիման վրա իրականացվող ֆինանսավորումն է, որի հիմքում ընկած է այն գաղափարը, որ գույք, տարածք և, հատկապես, ֆինանսական միջոցներ տրամադրելիս ուսումնական հաստատությունը պետք է հաշվի առնի ուսանողական մարմնի անդամների թվաքանակը՝ նախապատվություն տալով ավելի մեծ թվով մարմիններին։ Ֆինանսավորման հիմքում նման մոտեցման ամրագրման պարագայում հնարավոր է, որ ուսումնական հաստատության կողմից ֆինանսավորում ստանան առավել պասիվ ուսանողական մարմինները կամ նրանք, որոնց գործունեությունն ուղղակիորեն կապված չէ բուհի առաքելության և/կամ պրոֆիլային ուղղվածության հետ։ Ուստի, այս պարագայում ուսանողական ինքնակառավարման մարմինների միջև մրցակցության ապահովման նպատակով նախընտրելի է ուսումնական հաստատությունների կողմից ֆինանսավորումը դրամաշնորհների միջոցով՝ ներկայացված ծրագրի հիման վրա։ Բուհը կարող է սահմանել նաև ֆինանսավորման, այդ թվում նաև՝ համաֆինանսավորման առավելագույն չափ։ Հայտերը գնահատելիս օգտակար կարող է լինել աղյուսակ 1-ում ներկայացված բալային համակարգը։ Հավելենք նաև, որ **որոշակի դեպքերում** ուսումնական հաստատությունները ֆինանսական միջոցները կարող են տրամադրվել նաև ոչ թե դրամաշնորհի շրջանակներում, այլ *ad hoc* սկզբունքով՝ ուսանողական մարմնի ներկայացրած դիմումի և հիմնավորման հիման վրա, եթե առկա է ֆինանսավորման տրամադրման հիմնավոր պատճառ։ Անհրաժեշտ է նաև, որ ֆինանսավորման ողջ գործընթացը լինի հստակ և հանրամատչելի կառուցակարգերի վրա խարսխված, որպեսզի ուսանողներին առավելագույնս

հասկանալի լինի ուսանողական խմբերի ֆինանսավորման հիմքում ընկած տրամաբանությունը։

Եվ վերջապես ու՞մ է ուղղվելու ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից ստացված ֆինանսավորումը։ Արդյո՞ք ուսանողական ինքնակառավարման մարմինները հանդիսանալու են հարկատու, և պետք է ունենան բանկային հաշվեհամարներ։ Գործընթացը չբարդացնելու և ուսումնական հաստատության համար լրացուցիչ անհարմարություններ չստեղծելու նպատակով ֆինանսավորումն կարող է իրականացվել նույն այն մեխանիզմներով, որոնց միջոցով մինչ այժմ իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդների ֆինանսավորումը։

Ֆինանսական միջոցների դիմում-հայտերի, բյուջեի և ժամանակացույցի օրինակելի ձևերը ներկայացված են ստորև։

Ուսանողական մարմնի ֆինասավորման հայտ

Բուհում գրանցված ուսանողական մարմնի (համատեղ հայտի պարագայում՝ մարմինների) անվանումը և անդամների թվաքանակը

_____

Նյութական պատասխանատու ուսանողի/ուսանողների տվյալները (անուն, ազգանուն, ֆակուլտետ, կուրս)

_____

Բուհում գրանցված ուսանողական մարմնի (համատեղ հայտի պարագայում՝ մարմնի) գործունեության նկարագրությունը

_____

_____

_____

_____

Հայցվող ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)

_____

Ծրագրի մանրամասն նկարագիրը

_____

_____

_____

_____

Ծրագրի շահառու ուսանողների քանակը

_____

Ուսանողական մարմնի անդամների կոնտակտային տվյալները (էլ. հասցե և հեռախոսահամար)

_____

Ուսանողական մարմնի (համատեղ դիմումի դեպքում՝ մարմինների ղեկավարների) ղեկավարի ստորագրությունը

X _____

Աղյուսակ 2. Դրամաշնորհային հայտի բյուջեի օրինակելի ձև

Բյուջետային տող	Չափի միավոր (հատ, կգ, սմ և այլն)	Քանակ	Միավորի արժեք (դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)

11. Ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը

Ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը հնարավոր է ապահովել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մեխանիզմների միջոցով: Եթե ուսանողական ինքնակառավարման մարմիններն ունեն *կանոնադրություն, ապա վերջիններիս հաշվետվողականության* ներքին մեխանիզմները ենթադրում են կանոնադրությամբ սահմանված զսպման և հակակշռման մեխանիզմներ, իսկ հաշվետվողականության ձևն ու եղանակը ենթադրվում է, որ սահմանվում է կանոնադրությամբ: Ուսանողական ինքնակառավարման մարմիններն իրենց անդամներին հաշվետվությունները կարող են ներկայացնել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր եղանակով: Կարևոր է սակայն, որպեսզի ուսանողական ինքնակառավարման մարմիններն ուսումնական հաստատություններին ներկայացնեն ինչպես տարեկան, այնպես էլ ծրագրային հաշվետվություններ: Տարեկան հաշվետվությունները վերաբերում են ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից վերջիններիս ամրակցված տարածքի, գույքի և տեխնիկայի իրականացմանը, իսկ ծրագրային հաշվետվությունները՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացված գործունեությանը: Իր հերթին ծրագրային հաշվետվությունը բաղկացած է երկու մասից՝ իրականացված գործունեության հաշվետվություն և ֆինանսական հաշվետվություն: Թափանցիկության ապահովման տեսանկյունից կարևոր է, որպեսզի ուսումնական հաստատությունն իր կողմից ֆինանսավորում ստացած ուսանողական ինքնակառավարման խմբերի հաշվետվությունները ներկայացնի իր պաշտոնական կայքում:

Հավելված

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ուսումնական հաստատության ուսանողական խորհուրդը (հետայսու՝ ՈԻԽ) ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման, նրա շահերը պաշտպանող ընտրովի մարմին է:

1.2. ՈԻԽ-ն ապաքաղաքական և ապակուսակցական կազմակերպություն է:

1.3. ՈԻԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրության, կանոնադրության, ուսումնական հաստատության համար գործող ներքին իրավական ակտերի, ինչպես նաև սույն կանոնադրության հիման վրա:

1.4. ՈԻԽ-ն ունի անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ և իր գործունեությամբ ու նվիրատվությամբ ձեռք բերած գույքն ու ֆինանսական միջոցները տնօրինելու իրավունք:

1.6. ՈԻԽ հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն…

2. Ուսանողական խորհրդի առաքելությունը

2.1. ՈԻԽ առաքելությունը ուսանողների՝ համալսարանական գործունեության հետ կապված և վերջինիս առնչվող իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն է:

2.2. Առաքելությունից բխող առաջնային նպատակներից զատ՝ ՈԻԽ-ն նպաստում է , ուսանողների կրթական, գիտական, ստեղծագործական և մշակութային գործունեության բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ուսանողների ժամանցի կազմակերպմանը:

3. Ուսանողական խորհրդի նպատակներն ու խնդիրները

3.1. ՈԻԽ նպատակներն ու խնդիրներն են՝

ա. ապահովել ուսանողների մասնակցությունը ուսումնական հաստատության կառավարման մարմիններում,

բ. իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին,

գ. ուսումնական հաստատությունում գործող ուսանողական այլ կազմակերպությունների ու ակումբների հետ համագործակցությամբ նպաստել ուսանողների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանել ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային և ֆիզիկական զարգացմանը,

դ. նպաստել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը միտված միջոցառումներին,

ե. ժամանցային միջոցառումներ կազմակերպել ուսանողների համար։

3.2. Վերոնշյալ նպատակների ու խնդիրների իրագործման համար ՈՒԽ-ն կարող է համագործակցել և/կամ անդամակցել ՀՀ-ում և արտերկրում գործող ուսանողական և երիտասարդական կազմակերպություններին, ինչպես նաև համագործակցել մասնավոր անձանց ու կազմակերպությունների հետ, վերջիններիս հետ կնքել համագործակցության և/կամ փոխըմբռնման հուշագրեր։

3.3. Վերոնշյալ նպատակների իրականացման համար ՈՒԽ-ն կարող է իրականացնել հրատարակչական գործունեություն։

4. Ուսանողական խորհրդի կառուցվածքը

4.1. ՈՒԽ մարմիններն են ուսանողական սենատը, ՈՒԽ նախագահը, ֆակուլտետային ուսանողական խորհուրդները, ՈՒԽ հանձնաժողովները, ինչպես նաև վերստուգիչ և ընտրական հանձնաժողովները։

5. Ուսանողական սենատը

5.1. ՈՒսանողական սենատը ՈՒԽ կառավարման բարձրագույն օղակն է։

5.2. ՈՒսանողական սենատի նիստը իրավազոր է, եթե վերջինիս մասնակցում են սենատի 15 անդամների կեսից ավելին։ Բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի ուսանողական սենատը որոշումները կայացնում է ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ։

5.3. ՈՒսանողական սենատը հաստատում է ՈՒԽ կանոնադրությունը, տարեկան բյուջեն, գործողությունների ծրագիրը, ՈՒԽ նախագահի հաշվետվությունները։ Ուսանողական սենատը նաև հետևում և վերահսկում է ուսանողական խորհրդի նախագահության ընթացիկ գործունեությունը։

5.4. ՈՒսանողական սենատի անդամները ընտրվում են ուղիղ ընտրությունների միջոցով երկու տարի ժամկետով փակ գաղտնի քվեարկությամբ։ Ուսանողական սենատի ընտրություններին կարող է մասնակցել յուրաքանչյուր ուսանող՝ անկախ տարիքից, կրթաձևից, ֆակուլտետից, ուսումնական հաստատությունում ուսումնառության տարիների քանակից և առաջադիմությունից։

5.5. Որպես ուսանողական սենատի անդամ կարող են առաջադրվել առնվազն 13 միջին որակական գնահատական ունեցող ուսանողներ։ Սենատի անդամ են ընտրվում 15 ամենաշատ ձայն հավաքած ուսանողները։ Ուսանողական սենատն իր կազմից ընտրում է նախագահ և տեղակալ։ Ուսանողական սենատի նախագահը վարում է նիստերը և ներկայացնում սենատը և ՈՒԽ այլ օղակների հետ հարաբերություններում։

5.6. ՈՒսանողական սենատը ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու նիստ է գումարում՝ սեպտեմբեր և մայիս ամիսներին։ Սենատի նիստի օրը որոշում է սենատի նախագահը։ Ուսանողական սենատի արտահերթ նիստ կարող է հրավիրվել ՈՒԽ նախագահի կամ սենատի անդամների առնվազն 1/3-ի պահանջով։

5.7. ՈՒսանողական սենատը լուծարվում է ուսանողների ընդհանուր թվի առնվազն կեսից ավելիի կամարտահայտման պարագայում։ Կամարտահայտումը դրսևորվում է հետևյալ կերպ. ուսանողական սենատի լուծարումը ցանկացող ուսանողը սպիտակ թղթի վրա գրում է հետևյալ նախադասությունը. «Պահանջում եմ ՈՒԽ ուսանողական սենատի նոր՝ արտահերթ ընտրություններ։», որից հետո՝ իր անունը, ազգանունը, հայրանունը, ֆակուլտետը, կուրսը, ամսաթիվը և դնում է ստորագրություն։

5.8. ՈՒսանողական սենատում որևէ պատճառով թափուր տեղ առաջանալու պարագայում տեղի են ունենում սենատի անդամի արտահերթ ընտրություններ։ Արտահերթ ընտրությունների օրը նշանակում է ուսանողական սենատի նախագահը՝ ուսանողական սենատում թափուր տեղի առաջացման օրվանից ոչ շուտ, քան 20 և ոչ ուշ, քան 45 օր հետո։ Մինչև արտահերթ ընտրությունների օրը ներառյալ, լուծարված ուսանողական սենատը դեռևս շարունակում է կատարել իր բոլոր գործառույթները, սակայն չի կարող անվստահություն հայտնել ՈՒԽ նախագահին։

6. Ուսանողական խորհրդի նախագահը

6.1. ՈՒԽ նախագահը՝

ա. կազմակերպում և համակարգում է ՈՒԽ գործունեությունը,

բ. ուսանողական սենատի հաստատմանն է ներկայացնում ՈՒԽ բյուջեն և գործունեության տարեկան հաշվետվությունը,

գ. ներկայացնում է ՈՒԽ-ն այլ մարմինների հետ հարաբերություններում,

դ. ֆակուլտետային ուսանողական խորհուրդների նախագահների հետ խորհրդակցելով և հաստատված բյուջեի համաձայն տնօրինում է ուսանողական խորհրդի բյուջեն,

ե. համակարգում է ՈՒԽ կողմից կազմակերպվող կրթական և ժամանցային միջոցառումները,

զ. կարող է ՈՒԽ-ի պատվոգրով պարգևատրել ՈՒԽ աշխատանքներում առավել ակտիվորեն ներգրավված ուսանողներին,

է. կատարում է ՈՒԽ նախագահի պաշտոնի տրամաբանությունից բխող այլ պարտականություններ։

6.2. ՈՒԽ նախագահն ընտրվում է ընտրությունների միջոցով երկու տարի ժամկետով փակ գաղտնի քվեարկությամբ։ ՈՒԽ նախագահի ընտրություններին կարող է մասնակցել յուրաքանչյուր ուսանող՝ անկախ տարիքից, կրթաձևից, ֆակուլտետից, ուսումնական հաստատությունում ուսումնառության տարիների քանակից և առաջադիմությունից։

6.3. Որպես ՈՒԽ նախագահ կարող է առաջադրվել առնվազն 13 միջին որակական գնահատական ունեցող ցանկացած ուսանող։ ՈՒԽ նախագահի պաշտոնում ընտրվում է ընտրությանը մասնակցած ուսանողների ձայների մեծամասնությունը ստացած թեկնածուն։ Եթե թեկնածուներից ոչ ոք չի ստանում ընտրությանը մասնակցած ուսանողների ձայների մեծամասնությունը, ապա տեղի է ունենում ընտրությունների երկրորդ փուլ, որի արդյունքում ՈՒԽ նախագահ է ընտրվում առավել շատ ձայն ստացած թեկնածուն։

6.4 ՈՒԽ նախագահի թեկնածուն ընտրությունների օրվանից առնվազն 10 օր առաջ ուսանողներին պետք է ներկայացնի իր ծրագիրը, որը չկատարելու դեպքում

ընտրական հանձնաժողովի նախագահը վերջինիս թեկնածությունը պետք է ճանաչի անվավեր։

6.5. Որևէ պատճառով ՈՒԽ նախագահի պաշտոնի թափուր մնալու պարագայում ուսանողական սենատի նախագահը նշանակում է ՈՒԽ նախագահի արտահերթ ընտրությունների օրը՝ ՈՒԽ նախագահի պաշտոնը թափուր մնալու օրվանից ոչ շուտ, քան 10 և ոչ ուշ, քան 35 օր հետո։ Այդ ընթացքում ՈՒԽ նախագահի պարտականությունները կատարում է առավել բարձր միջին որակական գնահատական ունեցող փոխնախագահը։

6.6. ՈՒԽ նախագահին կարող են անվստահություն հայտնել ուսանողական սենատի առնվազն 12 անդամ կամ ուսանողների առնվազն կեսից ավելին։ ՈՒԽ նախագահին անվստահություն հայտնելիս ուսանողների կամարտահայտումը դրսևորվում է հետևյալ կերպ. ՈՒԽ նախագահին անվստահություն հայտնող ուսանողը սպիտակ թղթի վրա գրում է հետևյալ նախադասությունը. «Պահանջում եմ ՈՒԽ նախագահի նոր՝ արտահերթ ընտրություններ։», որից հետո՝ իր անունը, ազգանունը, հայրանունը, ֆակուլտետը, կուրսը, ամսաթիվը և դնում է ստորագրություն։

6.7. ՈՒԽ նախագահը չի կարող լինել ֆակուլտետային ՈՒԽ նախագահ կամ ուսանողական սենատի անդամ։

7. Ուսանողական խորհրդի փոխնախագահները

7.1. ՈՒԽ-ն պետք է ունենա երկու փոխնախագահ։

7.2. ՈՒԽ նախագահի որոշմամբ փոխնախագահներից մեկը համակարգում է ֆակուլտետային ՈՒԽ-ների գործունեությունը, մյուսը՝ ՈՒԽ հանձնաժողովների գործունեությունը։

7.3. ՈՒԽ փոխնախագահը չի կարող լինել ուսանողական սենատի անդամ կամ ֆակուլտետային ՈՒԽ նախագահ կամ ՈՒԽ հանձնաժողովի նախագահ։

7.4. Փոխնախագահներին նշանակում և ազատում է ՈՒԽ նախագահը։

8. Ֆակուլտետային ուսանողական խորհուրդները

8.1. Ֆակուլտետային ՈՒԽ-ների նպատակը ֆակուլտետում ՈՒԽ նպատակների իրագործումն է։

8.2. Ֆակուլտետային ՈՒԽ-ները կազմված են ֆակուլտետի ուսանողական սենատից և ֆակուլտետի ՈՒԽ նախագահից և վերջինիս կողմից նշանակվող փոխնախագահից։

8.3. Ֆակուլտետային ուսանողական սենատները և ֆակուլտետային ՈՒԽ նախագահներն ընտրվում են ուղիղ ընտրությունների միջոցով երկու տարի ժամկետով փակ գաղտնի քվեարկությամբ։

8.4. Որպես ֆակուլտետային ուսանողական սենատի անդամ կարող են առաջադրվել առնվազն 13 միջին որակական գնահատական ունեցող ուսանողները։ Ֆակուլտետային ուսանողական սենատի անդամ են ընտրվում 5 ամենաշատ ձայն հավաքած ուսանողները։ Ուսանողական սենատը իր կազմից ընտրում է նախագահ և տեղակալ։ Ֆակուլտետային ուսանողական սենատի նախագահը վարում է նիստերը և ներկայացնում է սենատը և ՈՒԽ այլ օղակների հետ հարաբերություններում։

8.5. Ֆակուլտետային ուսանողական սենատը ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու նիստ է գումարում՝ սեպտեմբեր և մայիս ամիսներին։ Սենատի նիստի օրը որոշում է ֆակուլտետային սենատի նախագահը։ Ուսանողական սենատի արտահերթ նիստ կարող է հրավիրվել ֆակուլտետային ՈՒԽ նախագահի կամ սենատի անդամների առնվազն 1/3-ի պահանջով։

8.6. Ֆակուլտետային ուսանողական սենատը լուծարվում է տվյալ ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թվի առնվազն կեսից ավելիի կամարտահայտման պարագայում։ Կամարտահայտումը դրսևորվում է հետևյալ կերպ. ուսանողական սենատի լուծարումը ցանկացող ուսանողը սպիտակ թղթի վրա գրում է հետևյալ նախադասությունը. «Պահանջում եմ մեր ֆակուլտետի ուսանողական սենատի նոր՝ արտահերթ ընտրություններ։», որից հետո՝ իր անունը, ազգանունը, հայրանունը, ֆակուլտետը, կուրսը, ամսաթիվը և դնում է ստորագրություն։

8.7. Ֆակուլտետային ուսանողական սենատում որևէ պատճառով թափուր տեղի առաջանալու պարագայում տեղի են ունենում սենատի անդամի արտահերթ ընտրություններ։ Արտահերթ ընտրությունների օրը նշանակում է ուսանողական սենատի նախագահը՝ ուսանողական սենատում թափուր տեղի առաջացման օրվանից ոչ շուտ, քան 20 և ոչ ուշ, քան 45 օր հետո։ Մինչև արտահերթ ընտրությունների օրը ներառյալ լուծարված ուսանողական սենատը դեռևս շարունակում է կատարել իր բոլոր գործառույթները, սակայն չի կարող անվստահություն հայտնել ՈՒԽ նախագահին։

8.8. Ֆակուլտետային ուսանողական սենատի լուծարման պարագայում ՈՒԽ նախագահը նշանակում է ֆակուլտետային ուսանողական սենատի արտահերթ ընտրությունների օրը՝ ուսանողական սենատի լուծարման օրվանից ոչ շուտ, քան 20

և ոչ ուշ, քան 45 օր հետո։ Մինչև արտահերթ ընտրությունների օրը ներառյալ լուծարված ֆակուլտետային ուսանողական սենատը դեռևս շարունակում է կատարել իր բոլոր գործառույթները, սակայն չի կարող անվստահություն հայտնել ֆակուլտետային ՈՒԽ նախագահին։

8.9. Ֆակուլտետային ՈՒԽ նախագահը կազմակերպում և համակարգում է ֆակուլտետային ՈՒԽ գործունեությունը, ինչպես նաև ներկայացնում է ֆակուլտետային ՈՒԽ-ն ուսումնական հաստատության ներսում և այլ մարմինների հետ հարաբերություններում։

8.10. Ֆակուլտետային ՈՒԽ նախագահի ընտրություններին կարող է մասնակցել ֆակուլտետի յուրաքանչյուր ուսանող՝ անկախ տարիքից, կրթաձևից, ֆակուլտետից, ուսումնական հաստատությունում ուսումնառության տարիների քանակից և առաջադիմությունից։

8.11. Որպես ֆակուլտետի ՈՒԽ նախագահ կարող է առաջադրվել տվյալ ֆակուլտետում սովորող առնվազն 13 միջին որակական գնահատական ունեցող ցանկացած ուսանող։ ՈՒԽ նախագահի պաշտոնում ընտրվում է ընտրությանը մասնակցած ուսանողների ձայների մեծամասնությունը ստացած թեկնածուն։ Եթե թեկնածուներից ոչ ոք չի ստանում ընտրությանը մասնակցած ուսանողների ձայների մեծամասնությունը, ապա տեղի է ունենում ընտրությունների երկրորդ փուլ, որի արդյունքում ֆակուլտետային ՈՒԽ նախագահ է ընտրվում առավել շատ ձայն ստացած թեկնածուն։

8.12 Ֆակուլտետային ՈՒԽ նախագահի թեկնածուն ընտրությունների օրվանից առնվազն 10 օր առաջ ուսանողներին պետք է ներկայացնի իր ծրագիրը, որը չկատարելու դեպքում ֆակուլտետային ընտրական հանձնաժողովի նախագահը վերջինիս թեկնածությունը պետք է ճանաչի անվավեր։

8.13. Որևէ պատճառով ֆակուլտետային ՈՒԽ նախագահի պաշտոնի թափուր մնալու պարագայում ֆակուլտետային ուսանողական սենատի նախագահը նշանակում է ՈՒԽ նախագահի արտահերթ ընտրությունների օրը՝ ֆակուլտետային ՈՒԽ նախագահի պաշտոնը թափուր մնալու օրվանից ոչ շուտ, քան 10 և ոչ ուշ, քան 35 օր հետո։ Այդ ընթացքում ՈՒԽ նախագահի պարտականությունները կատարում է առավել բարձր միջին որակական գնահատական ունեցող փոխնախագահը։

8.14. Ֆակուլտետային ՈՒԽ նախագահին կարող են անվստահություն հայտնել ֆակուլտետային ուսանողական սենատի առնվազն 4 անդամ կամ տվյալ ֆակուլտետի ուսանողների առնվազն կեսից ավելին։ Ֆակուլտետային ՈՒԽ նախագահին անվստահություն հայտնելիս ֆակուլտետի ուսանողների կամարտահայտումը դրսևորվում է հետևյալ կերպ. ֆակուլտետային ՈՒԽ

նախագահին անվստահություն հայտնող ուսանողը սպիտակ թղթի վրա գրում է հետևյալ նախադասությունը. «Պահանջում եմ մեր ֆակուլտետի ուսանողական ՈՒԽ նախագահի նոր՝ արտահերթ ընտրություններ։», որից հետո՝ իր անունը, ազգանունը, հայրանունը, ֆակուլտետը, կուրսը, ամսաթիվը և դնում է ստորագրություն։

9. Ուսանողական խորհրդի հանձնաժողովները

9.1. ՈՒԽ կազմում կարող են գործել ուսումնագիտական, արտաքին կապերի, լրատվության և հասարակայնության հետ կապերի, սպորտի և մշակույթի հանձնաժողովները։ Նշված հանձնաժողովներից զատ, ուսանողական սենատի համաձայնությամբ, ՈՒԽ կազմում կարող են գործել նաև այլ հանձնաժողովներ։

9.2. առնվազն երեք ուսանող կարող են դիմում ներկայացնել ուսանողական սենատի նախագահին ՈՒԽ հանձնաժողով ձևավորելու առաջարկով։

9.3. Հանձնաժողովի ձևավորման առաջարկությամբ հանդես եկած ուսանողները ուսանողական սենատին պետք է ներկայացնեն հանձնաժողովի ստեղծման նպատակը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի թեկնածուներին։ Հանձնաժողովի կազմը և նպատակները հաստատելուց առաջ ուսանողական սենատը պետք է լսի ՈՒԽ նախագահի կարծիքը։

9.4. ՈՒսանողական սենատը հանձնաժողովի ստեղծման առաջարկությամբ հանդես եկած ուսանողների կողմից առաջադրված թեկնածուներից փակ քվեարկությամբ ընտրում է հանձնաժողովի նախագահ։ Հանձնաժողովի նախագահ է ընտրվում ուսանողական սենատի կողմից առավել շատ ձայներ ստացած թեկնածուն։

10. Ֆինանսական միջոցները

10.1. ՈՒԽ միջոցները գոյանում են հատկացումներից, հանգանակություններից, նվիրատվություններից և Կանոնադրությանը, ինչպես նաև սույն կանոնադրությանը չհակասող, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից։

11. Վերստուգիչ հանձնաժողովը

11.1. Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է ՈՒԽ նախագահի որոշումների կանոնակարգային համապատասխանության, ինչպես նաև ՈՒԽ

ֆինանսական միջոցների ու գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողությունը։

11.2. Հանձնաժողովի կազմի երեք անդամների թեկնածուներին առաջարկում են ֆակուլտետային ՈՒԽ նախագահները։ Ֆակուլտետային ՈՒԽ յուրաքանչյուր նախագահ պետք է ներկայացնի առնվազն երկու և առավելագույնը հինգ թեկնածու։

11.3. Վերստուգիչ հանձնաժողովի երեք անդամներին փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է ուսանողական սենատը։ Վերստուգիչ հանձնաժողովի անդամ են ընտրվում ուսանողական սենատի կողմից ամենաշատ ձայներ ստացած երեք թեկնածուները։ Վեստուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց կազմից ընտրում են հանձնաժողովի նախագահ, որը ներկայացնում է հանձնաժողովը ՈՒԽ այլ մարմինների հետ հարաբերություններում։

11.4. Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է միայն ուսանողական սենատին և վերջինիս ներկայացնում է ամենամյա հաշվետվություններ։

12. Ընտրական հանձնաժողովը

12.1. ՈՒսանողական սենատի անդամների, ՈՒԽ նախագահի, ֆակուլտետային սենատի և ֆակուլտետային ՈՒԽ նախագահի ընտրությունների կազմակերպման համար ձևավորվում է ընտրական հանձնաժողովը։

12.2. Ընտրական հանձնաժողովում պետք է ներկայացված լինի յուրաքանչյուր կուրսից մեկ ուսանող, որը ընտրվում է կուրսի ուսանողների ձայների պարզ մեծամասնությամբ։ Կուրսում ընտրական հանձնաժողովի անդամի մեկից ավելի թեկնածուի առկայության դեպքում անցկացվում է փակ գաղտնի քվեարկություն։ Եթե ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածուներից ոչ ոք չի ստանում ընտրությանը մասնակցած ուսանողների ձայների մեծամասնությունը, ապա տեղի է ունենում ընտրությունների երկրորդ փուլ, որի արդյունքում ընտրական հանձնաժողովի անդամ է դառնում առավել շատ ձայն հավաքած թեկնածուն։ Ընտրական հանձնաժողովի նախագահներն իրենց կազմից ընտրում են նախագահ և ֆակուլտետային ընտրական հանձնաժողովի նախագահներ։

12.3. Ընտրական հանձնաժողովի անդամներն ընտրվում են երկու տարի ժամկետով։

12.4. Ընտրական հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է ընտրական հանձնաժողովի անդամների կեսից ավելին։

12.5. Ֆակուլտետային ուսանողական սենատների, ինչպես նաև ֆակուլտետային ՈՒԽ նախագահների ընտրությունը կազմակերպում են միայն տվյալ ֆակուլտետի ուսանող հանդիսացող ընտրական հանձնաժողովի անդամները։

13. Եզրափակիչ դրույթներ

13.1. Սույն կանոնադրությունը պետք է ընդունվի ՈՒԽ գործող կանոնադրությամբ սահմանված կարգով՝ ՈՒԽ համագումարի կողմից։

13.2. Սույն կանոնադրությունը կարող է փոփոխության ենթարկվել ուսանողական սենատի անդամների առնվազն երեք քառորդի կամ ուսանողների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ։ Ուսանողների մեկ երրորդի կամարտահայտումը դրսևորվում է հետևյալ կերպ. կանոնադրության փոփոխություն ցանկացող ուսանողը սպիտակ թղթի վրա գրում է հետևյալ նախադասությունը. «Պահանջում եմ ՈՒԽ կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները։», որից հետո՝ փոփոխությունների առաջարկի մանրամասն նկարագրությունը, իր անունը, ազգանունը, հայրանունը, ֆակուլտետը, կուրսը, ամսաթիվը և դնում է ստորագրություն: Կանոնադրության փոփոխությունները իրականացվում է համաուսանողական հանրաքվեի միջոցով, որին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ուսանող։ Կանոնադրության փոփոխությունը համարվում է ընդունված, եթե վերջինիս կողմ է քվեարկում ուսանողական հանրաքվեին մասնակցած ուսանողների պարզ մեծամասնությունը։

13.3. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում ՈՒԽ գործող կանոնադրությամբ սահմանված կարգով հաստատումից 10 աշխատանքային օր հետո։